**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

29 մայիսի 2015 թվականի **թիվ 3** քաղ. Բուրաբայ

**2015-2016 թվականների համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների պլանի մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հոդվածին եւ «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց՝**

1. Հաստատել 2015-2016 թվականների համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների՝ կից ներկայացված խորհրդատվական ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումների ծրագիր):

2. Միջոցառումների ծրագրի իրագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին առաջարկել՝

մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունվող այն իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ

առաջարկները, որոնք անհրաժեշտ են միջոցառումների ծրագրի իրագործման համար.

ապահովել միջոցառումների պլանի՝ սահմանված ժամկետներում իրագործումը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համակարգմամբ.

տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումների իրագործման եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ միջոցառումների պլանի իրագործման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման ընթացքի մասին.

ապահովել ամեն տարի՝ մինչեւ մարտի 1-ը, հետեւյալ փաստաթղթերը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելը՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ թեթեւ արդյունաբերության արտադրանք արտադրողների եւ թեթեւ արդյունաբերության արտադրության ժամանակ օգտագործվող գյուղատնտեսական, կաշվե եւ քիմիական հումք (քիմիական մանրաթելեր եւ թելեր, սինթետիկ մանրաթելերից գործվածքներ) արտադրողների ցանկը՝ համաձայն թիվ 1 հավելվածի ձեւի.

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության ճյուղում արտադրությունների արդիականացմանն ու նոր արտադրությունների ստեղծմանն ուղղված՝ իրագործվող եւ իրագործման համար պլանավորվող ներդրումային ծրագրերի ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի ձեւի:

**Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝**

| | | | |
|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետությունից** | **Բելառուսի Հանրապետությունից** | **Ղազախստանի Հանրապետությունից** | **Ռուսաստանի Դաշնությունից** |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական միջկառավարական

խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի

թիվ 3 որոշմամբ

**ՊԼԱՆ**

**2015-2016 թվականների համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումների**

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) անդամ պետություններից առնվազն մեկի տարածքում չարտադրվող կամ ոչ բավարար քանակով արտադրվող ապրանքների արտադրության արդիականացմանը եւ նոր արտադրությունների ստեղծմանն ուղղված համատեղ համագործակցային եւ (կամ) ներդրումային ծրագրերի իրագործում՝ | | | |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| ա) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ համատեղ համագործակցային եւ (կամ) ներդրումային ծրագրերի եւ դրանց իրագործման մեխանիզմների մասին առաջարկության նախապատրաստում (այդ թվում՝ մասնավոր-պետական գործընկերության սկզբունքների հիման վրա), ներառյալ հետեւյալ հատվածներում անդամ պետությունների համատեղ արտադրանքի համագործակցային շղթաների ձեւավորման մասին առաջարկության մշակում՝<br><br>պոլիեթերային մանրաթելերի եւ թելերի արտադրություն<br><br>բրդյա եւ սինթետիկ գործվածքների եւ տեխնիկական մանածագործվածքի արտադրություն<br><br>կոշիկի արտադրություն (ներառյալ կոշիկի եւ գալանտերեային օժանդակ իրերի (ֆուրնիտուրայի), կոճղակների եւ կոշիկի այլ մասերի արտադրությունը)<br><br>կաշվի արտադրություն եւ կահույքագործական արտադրանք արտադրողների եւ մեքենա արտադրողների հետ կաշի արտադրողների | Հանձնաժողովի առաջարկություն | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի նոյեմբեր |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| համագործակցության զարգացում՝ միջճյուղային համագործակցության շրջանակներում | | | |
| բ) համատեղ համագործակցային եւ (կամ) ներդրումային ծրագրերի իրագործման համար պայմաններ ապահովելու նպատակով միջոցների ձեռնարկում | անհրաժեշտության դեպքում՝ անդամ պետությունների իրավական ակտեր | անդամ պետություններ | 2015-2016 թթ |
| 2. Նորարարական արդյունաբերական ենթակառուցվածք ստեղծելու ոլորտում անդամ պետությունների համատեղ նորարարական եւ (կամ) ներդրումային ծրագրերի իրագործում | Հանձնաժողովի առաջարկություններ, անհրաժեշտության դեպքում՝ անդամ պետությունների իրավական ակտեր | Հանձնաժողով, անդամ պետություններ | 2015-2016 թթ |
| 3. Անդամ պետությունների՝ թեթեւ արդյունաբերության արտադրանքի արտադրման եւ իրացման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին պետական (մունիցիպալ) գնումներին մասնակցելու հնարավորության համար հավասար պայմանների ապահովում | Հանձնաժողովի առաջարկություն | Հանձնաժողով, անդամ պետություններ | 2015-2016 թթ |
| 4. Միության մաքսային սահմանով տեղափոխվող թեթեւ արդյունաբերության ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշները եւ այն արժեքային ու քաշային նորմերը սահմանելու վերաբերյալ առաջարկները, որոնց | ԵՏՀ խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 61 որոշմանը համապատասխան ստեղծված՝ մաքսային օրենսդրության | անդամ պետություններ | 2015 թվականի դեկտեմբեր |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| սահմաններում այդպիսի ապրանքները կարող են ներմուծվել առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման | կատարելագործման հարցերով աշխատանքային խումբ ներկայացվող առաջարկներ | | |
| 5. Թեթեւ արդյունաբերության ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված տեղեկությունների վերլուծության հիման վրա մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները կանոնակարգող կանոններում փոփոխություններ կատարելու հարցով առաջարկներ | ԵՏՀ խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 61 որոշմանը համապատասխան ստեղծված՝ մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խումբ ներկայացվող առաջարկներ | անդամ պետություններ | 2015 թվականի դեկտեմբեր |
| 6. Անդամ պետությունների կողմից նոր տեխնոլոգիաների համատեղ յուրացում՝ | | | |
| ա) յուրացման եւ կիրառման համատեղ ծրագրերի իրագործման մասին Հանձնաժողովի առաջարկության նախապատրաստում՝ | Հանձնաժողովի առաջարկություն | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի նոյեմբեր |
| կոմպոզիցիոն նյութերի, դրանցից պատրաստված կոնստրուկցիաների եւ արտադրատեսակների | | | |
| վուշի, կանեփի, բրդի, մորթիների, քիմիական մանրաթելերի եւ թելերի խորը վերամշակման բարձր տեխնոլոգիաների | | | |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| նոր սերնդի՝ նախասահմանված գործառական հատկություններով (թերապեւտիկ, հրակայուն, կենսաակտիվ եւ այլն) սպառողական ապրանքների (տրիկոտաժ, հագուստ, կոշիկ, չգործված կտորեղեն) եւ տեխնիկական մանածագործվածքի արտադրության տեխնոլոգիաների | | | |
| բ) նոր տեխնոլոգիաների յուրացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրագործման համար պայմաններ ապահովելուն ուղղված միջոցների ձեռնարկում | անհրաժեշտության դեպքում՝ անդամ պետությունների իրավական ակտեր | անդամ պետություններ | 2015-2016 թթ |
| 7. Միության եւ երրորդ երկրների շուկաներում պահանջվող թեթեւ արդյունաբերության արտադրանքի տեսակների որոշման համար Միության շրջանակներում թեթեւ արդյունաբերության կարճաժամկետ եւ երկարաժամկետ զարգացման գիտատեխնիկական կանխատեսման կազմակերպում | գիտահետազոտական աշխատանքի անցկացում | Հանձնաժողով, անդամ պետություններ | 2015-2016 թթ |
| 8. «Թեթեւ արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 017/2011) եւ «Երեխաների եւ դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) (թեթեւ արդյունաբերության արտադրանքի | անդամ պետությունների գործադիր իշխանության լիազոր մարմինների կողմից համաժողովների անցկացում | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի դեկտեմբեր |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| մասով) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման վերահսկողությունը կազմակերպելու եւ անցկացնելու վերաբերյալ փորձի փոխանակում անդամ պետությունների գործադիր իշխանության լիազոր մարմինների կողմից | | | |
| 9. Թեթեւ արդյունաբերության՝ անդամ պետությունների տարածքում արտադրված արտադրանքի արտադրման եւ իրացման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին աջակցելու մեխանիզմի մասին Հանձնաժողովի առաջարկության մշակում | Հանձնաժողովի առաջարկություն | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի սեպտեմբեր |
| 10. Թեթեւ արդյունաբերությունը կառավարելու եւ նոր տեխնոլոգիաներ ներմուծելու, ինչպես նաեւ մասնագիտացված աշխատուժ պատրաստելու եւ ճյուղում ներգրավելու արդյունավետ մեխանիզմների օգտագործման վերաբերյալ փորձի փոխանակում անդամ պետությունների գործադիր իշխանության լիազոր մարմինների կողմից | անդամ պետությունների գործադիր իշխանության լիազոր մարմինների կողմից համաժողովների անցկացում | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի սեպտեմբեր |
| 11. Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերին եւ կանոններին համապատասխան՝ թեթեւ արդյունաբերության արտադրողներին աջակցելուն ուղղված այնպիսի միջոցների մշակում, որոնք | անդամ պետությունների իրավական ակտեր, Հանձնաժողովի ակտ | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի դեկտեմբեր |

| Միջոցառման անվանումը | Իրագործման ձեւը | Կատարողը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| կապված են երրորդ երկրների շուկաներում ապրանքների առաջմղման (այդ թվում՝ ցուցահանդեսատոնավաճառային եւ գովազդային գործունեության) հետ | | | |
| 12. Անդամ պետությունների՝ վուշաթելքի, կաշվե հումքի, բամբակաթելքի, բրդի թեթեւ արդյունաբերության համար հումքի կանխատեսվող բալանսների ձեւավորման (կազմելու) մեթոդիկայի մշակում | Հանձնաժողովի առաջարկություն | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015-2016 թթ |
| 13. Թեթեւ արդյունաբերության ձեռնարկությունները կաշվե հումքով ապահովելու միջոցների մշակում | Հանձնաժողովի առաջարկություն | անդամ պետություններ, Հանձնաժողով | 2015 թվականի դեկտեմբեր |

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական միջկառավարական
խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի
թիվ 3 որոշման

(ձեւ)

**ՑԱՆԿ**

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանք արտադրողների եւ թեթեւ արդյունաբերության արտադրության ժամանակ օգտագործվող գյուղատնտեսական, կաշվե եւ քիմիական հումք (քիմիական մանրաթելեր եւ թելեր, սինթետիկ մանրաթելերից գործվածքներ) արտադրողների**

| Արտադրողի անվանումը | Արտադրվող արտադրանքի (հումքի) անվանումը եւ նկարագրությունը | Իրավաբանական անձի գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|

_____

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Եվրասիական միջկառավարական
խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի
թիվ 3 որոշման

(ձեւ)

**ՑԱՆԿ**

**Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության ճյուղում արտադրությունների արդիականացմանն ու նոր արտադրությունների ստեղծմանն ուղղված՝ իրագործվող եւ իրագործման համար պլանավորվող ներդրումային ծրագրերի**

| Ներդրումային ծրագրի անվանումը | Ներդրումային ծրագիրն իրականացնող իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը | Ներդրումային ծրագրի իրագործման վայրը | Ներդրումային ծրագրի իրագործման ժամկետը | Ներդրումային ծրագրի իրագործման հիմքերը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|

_____